ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/251

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.11.2020թ. թիվ 26/26-1/17341-2020 գրությամբ Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 19.11.2020թ. թիվ 01/06-22808 գրության հիման, վրա 23.11.2020թ. թիվ 26/26-1/17341-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Արտուշ Խաչատրյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/251 ընթացակարգի շրջանակներում 04.12.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.11.2020թ. թիվ 01/06-22808 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի միջև 18.12.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որի շրջանակներում ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո, պայմանագրի կողմերի միջև 07.02.2020թ. կնքվել է լրացուցիչ համաձայնագիր:

Պայմանագրի 8.14 կետով սահմանված պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտավորությունները 1-ին չափաբաժնի մասով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարությունը 19.05.2020թ., 20.05.2020թ., 27.05.2020թ. և 12.08.2020թ. հ.06/14639 գրություններով դիմել է Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանք մատակարարելու համար, սակայն Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

05.10.2020թ. Երևանի քաղաքապետարանը, աշխատակիցների բազմաթիվ դժգոհությունների պատճառով, Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի կողմից մատակարարված

ջրից մեկ շիշ՝ փակ վիճակում, 18.9լ տարողությամբ ուղարկվել է փորձարկման՝ պարզելու ջրի որակական ցուցանիշները:

Ստացված առ 15.10.2020թ. փորձարկման N 2080 եզրակացության համաձայն Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի կողմից մատակարարված ջուրը ՄԸԹ-ի անթույլատրելի քանակով, պսևդոմոնաս աէրոգինոզա, E.coli, էնտերոկոկկեր և աղիքային ցուպիկի մանրէների առկայությամբ չի համապատասխանում ՄՄ ՏԿ ԵԱՏՄ ՏԿ 044/2017-ով սահմանված նորմերին (փորձարկման արձանագրությունը կցվում է):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ «Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա/ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, բ/ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի՝ 1-ին չափաբաժնի մասով հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն նշված չափաբաժնի մասով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի

N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/251 ընթացակարգի շրջանակներում 04.12.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/251 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/251 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի միջև 18.12.2019թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:
2. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 07.02.2020թ. կնքվել է N 1 համաձայնագիրը:
3. Պատվիրատուի կողմից 17.11.2020թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.11.2020թ. թիվ 26/26-1/17341-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 19.11.2020թ. թիվ 01/06-22808 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի միջև 18.12.2019թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 07.02.2020թ. կնքվել է N 1 համաձայնագիրը:

Պայմանագրին կից Հավելվածով 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Ապրանքի անվանում	Ստացող	Ընդհանուր քանակը	մատակարարման		
			հասցեն	Ենթակա քանակը	Նախատեսվում է գնել 2020թ. ընթացքում, ընդ որում ձեռքբերման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից մինչև չափաբաժիններում նշված ժամկետը
Խմելու բնական աղբյուրի ջուր	Քաղաքապետարանի քարտուղարություն	73720լ	Արգիշտի 1	18430	1-ին եռամսյակ՝ մինչև 31.03.2020
				18430	2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2020
				18430	3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2020
				18430	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2020
Ջուր բնական	Կենտրոն վարչական շրջան	10400լ	Տերյան 44	2600	Նախատեսվում է գնել 2020 թ.-ի 1-ին եռամսյակում- մինչև 30.03.2020թ.
				2600	2-րդ եռամսյակ- մինչև 30.06.2020թ.
				2600	3-րդ եռամսյակ- մինչև 30.09.2020թ.
				2600	4-րդ եռամսյակ- մինչև 15.12.2020թ.
Ջուր բնական	Արաբկիր վարչական շրջան		Ն.Զարյան 27	3600	պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ
				800	պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ
Ջուր բնական	Էրեբունի վարչական շրջան	9519լ	Ս.Դավիթ 87	2379	1-ին եռամսյակ - պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 20- օրացուցային օր հետո մինչև 31.03.2020թ.
				2380	2-րդ եռամսյակ -մինչև 30.06.2020թ
				2380	3-րդ եռամսյակ -մինչև

					30.09.2020թ..
				2380	4-րդ եռամսյակ -մինչև 25.12.2020թ..

Պատվիրատուն Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին ուղղված 19.05.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հարգելի Արտուշ Խաչատրյան, 18.12.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2 պայմանագրի համաձայն՝ խնդրում ենք 20.05.2020թ. մինչև ժամը 12:00 Երևանի քաղաքապետարանի Արգիշտի 1 (48 շիշ, 920 լիտր) և Փ. Բուզանդի 1/3 (8 շիշ, 160 լիտր) հասցեներում մատակարարել պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք:

Հիշեցնում ենք, որ 18.05.2020թ. Ձեր կողմից ջուր չի մատակարարվել, խնդրում ենք պահպանել հիգենայի կանոնները և մատակարարել տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք»:

Այնուհետև՝ 27.05.2020թ., Պատվիրատուն Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հարգելի Արտուշ Խաչատրյան, 18.12.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2 պայմանագրի համաձայն՝ խնդրում ենք 01.06.2020թ. մինչև ժամը 12:00 Երևանի քաղաքապետարանի Արգիշտի 1 (16 շիշ, 320 լիտր) և Փ. Բուզանդի 1/3 (8 շիշ, 160 լիտր) հասցեներում մատակարարել պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք:

Հիշեցնում ենք 27.05.2020թ. շենքում ջուր չի մատակարարվել, նաև հիշեցնում ենք, որ ապրանքը պետք է լիովին համապատասխանի պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրին, հակառակ դեպքում Երևանի քաղաքապետարանը կկիրառի պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման պատժամիջոցներ»:

Պատվիրատուն Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին ուղղված 12.08.2020թ. թիվ 06/14639 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից բազմիցս խախտվել են 18.12.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2 պայմանագրի պահանջները: Ապրանքի մատակարարումը կատարվել է սանիտարական պայմաններին չհամապատասխանող տարաներով, պարբերաբար առանց փաթեթավորման, նախօրոք պատվիրած քանակներից պակաս, ինչպես նաև ժամկետների էական խախտումներով: 13.07.2020թ. մատակարարված ջրի տարաների խցանների փոփոխության արդյունքում առաջացել են խնդիրներ՝ կապված տեղադրման

հետ: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տարբեր ստորաբաժանումներից բազմիցս ստանում ենք բողոքներ կապված խմելու ջրի որակի հետ, ինչը չի կարող կապ ունենալ ջրի դիսպենսերների հետ, քանի որ դիսպենսերները մշտապես լվացվում և վերանորոգվում են համապատասխան մասնագետների կողմից: Հիշեցնում ենք, որ 10.08.2020թ. և 11.08.2020թ. Երևանի քաղաքապետարանի Արգիշտի 1 և Բուզանդի 1/3 հասցեներ խմելու ջուր չի մատակարարվել: Ըստ տեխնիկական բնութագրի մատակարարումը պետք է կատարվի յուրաքանչյուր աշխատանքային օր, մինչև ժամը 12:00: Տարաները պետք է լինեն ամբողջովին փաթեթավորված մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակներով: Կից ներկայացվում են 19.05.2020թ., 20.05.2020թ. և 27.05.2020թ. քարտուղարության կողմից Ձեր էլ. հասցեին ուղարկված հաղորդագրությունները: Հիշեցնում ենք, որ ապրանքը պետք է լիովին համապատասխանի պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրին, հակառակ դեպքում Երևանի քաղաքապետարանը կկիրառի պայմանագրով սահմանված պատժամիջոցներ:

Հաշվի առնելով վերոնշյալը առաջարկվում է եռօրյա ժամկետում կարգավորել խնդիրները»:

Պատվիրատուն «Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ-ին ուղղված 05.10.2020թ. թիվ 06/19744 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ելնելով անհրաժեշտությունից, խնդրում եմ Ձեր միջոցների հաշվին որոշել Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի (հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն 40/22,ՀՎՀՀ՝ 40533194) կողմից Երևանի քաղաքապետարան մատակարարվող 18,9 լ տարողությամբ պոլիկարբոնատե շշով «Ակվամարինա» անվամբ բնական աղբյուրի խմելու ջրի որակական ցուցանիշները և տալ համապատասխան եզրակացություն»:

Պատվիրատուն Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին ուղղված 16.10.2020թ. թիվ 06/20757 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Չնայած բազմաթիվ բանավոր և գրավոր զգուշացումներին, Ձեր կողմից շարունակվում են խախտվել 18.12.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» պայմանագրի պահանջները՝ ապրանքը մատակարարվում է առանց փաթեթավորման, կեղտոտ տարաներով, պատվիրված քանակից պակաս, շշերում առկա են լինում օտար մարմիններ, ջրից տհաճ համ է գալիս:

Այդ իսկ պատճառով, մեր շատ ստորաբաժանումներ ընդհանրապես հրաժարվել են ջուր ընդունելուց:

Տեղեկացնում եմ Ձեզ, որ 05.10.2020թ. Երևանի քաղաքապետարանը, աշխատակիցների բազմաթիվ դժգոհությունների պատճառով, Ձեր կողմից մատակարարված ջրից մեկ շիշ փակ վիճակում 20լ տարողությամբ ուղարկել է փորձաքննության՝ պարզելու ջրի որակական ցուցանիշները: Արդյունքների մասին Ձեզ կտեղեկացվի լրացուցիչ»:

<u>«Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ-ի կողմից 15.10.2020թ. տրվել է թիվ 2080 փորձարկման արձանագրությունը, որի համաձայն՝ ներկայացված նմուշը ՄԸԹ-ի անթույլատրելի քանակով, պսևդոմոնաս ակրոգինոզա, E.coli, էնտերոկոկկեր և աղիքային ցուպիկի խմբի մանրէների առկայությամբ չի համապատասխանում ՄՄ ՏԿ ԵԱՏՄ ՏԿ 044/2017-ով սահմանված նորմերին:</u>

Պատվիրատուն Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին ուղղված 17.11.2020թ. թիվ 01/06-22625 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի միջև 18.12.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որի շրջանակներում ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո, պայմանագրի կողմերի միջև 07.02.2020թ. կնքվել է լրացուցիչ համաձայնագիր:

Պայմանագրի 8.14 կետով սահմանված պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտավորությունները 1-ին չափաբաժնի մասով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարությունը 19.05.2020թ., 20.05.2020թ., 27.05.2020թ., 12.08.2020թ. հ.06/14639 գրություններով դիմել է Ձեզ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանք մատակարարելու համար, սակայն Ձեր կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

05.10.2020թ. Երևանի քաղաքապետարանը, աշխատակիցների բազմաթիվ դժգոհությունների պատճառով, Ձեր կողմից մատակարարված ջրից մեկ շիշ՝ փակ

վիճակում, 18.9լ տարողությամբ ուղարկել է փորձարկման՝ պարզելու ջրի որակական ցուցանիշները:

Ստացված առ 15.10.2020թ. փորձարկման N 2080 եզրակացության համաձայն՝ Ձեր կողմից մատակարարված ջուրը ՄԸԹ-ի անթույլատրելի քանակով, պսևդոմոնաս աէրոգինոզա, E.coli, էնտերոկոկկեր և աղիքային ցուպիկի մանրէների առկայությամբ չի համապատասխանում ՄՄ ՏԿ ԵԱՏՄ ՏԿ 044/2017-ով սահմանված նորմերին (փորձարկման արձանագրությունը կցվում է):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ «Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա/ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, բ/ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

<u>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի՝ 1-ին չափաբաժնի մասով հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն նշված չափաբաժնի մասով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն</u>

որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

Պատվիրատուի կողմից 17.11.2020թ. տեղեկագրում հրապարակվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Այսպիսով՝ Ա/Ձ Արտուշ Խաչատրյանը բազմիցս խախտելով իր և Երևանի քաղաքապետարանի միջև 18.12.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2 ծածկագրով գնման պայմանագրին կից Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետները միևնույն ժամանակ մատակարարել է անպատշաճ որակի ապրանք, այն է՝ մատակարարված ջուրը ՄԸԹ-ի անթույլատրելի քանակով, պսևդոմոնաս աէրոգինոզա, E.coli, էնտերոկոկկեր և աղիքային ցուպիկի մանրէների առկայությամբ չի համապատասխանել ՄՄ ՏԿ ԵԱՏՄ ՏԿ 044/2017-ով սահմանված նորմերին, արդյունքում թույլ է տվել Պայմանագրի էական խախտումներ, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Մասնակիցը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.11.2020թ. թիվ 26/26-1/17341-2020 գրությամբ Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**